Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1096-24.02.2011-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

<<ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <<Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (27-ը հոկտեմբերի 2010 թվականի, ՀՕ-160-Ն, այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունից հանել <<և ոչ աշխատանքային>> բառերը, իսկ Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը <<իրականացնող>> բառից հետո լրացնել <<այլ>> բառով:

Հոդված 2. Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<ՀՈԴՎԱԾ 22. ՆՊԱՍՏՆԵՐԸ ԵՎ ՄԻՁԻՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ (ԵԿԱՄՈՒՏԸ) ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Նպաստները հաշվարկվում են վարձու աշխատողի կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի՝ սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձից (եկամտից):

Եթե ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի՝ սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձի չափը գերազանցում է ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու օրվա դրությամբ <<Նվազագույն ամսական աշխատավարձի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի (այսուհետ՝ նվազագույն ամսական աշխատավարձ) հինգապատիկը, ապա նպաստը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի հինգապատիկից՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

2. Վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու ամսվան նախորդող տասներկու հերթական օրացուցային ամիսների (այսուհետ՝ հաշվարկային ժամանակահատված) համար տվյալ գործատուի կողմից վարձու աշխատողին վճարված եկամուտը տասներկուսի բաժանելու միջոցով:

Սույն մասի իմաստով եկամուտ է համարվում սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող աշխատավարձը և դրան հավասարեցված եկամուտները, ինչպես նաև՝ սույն օրենքով սահմանված նպաստը:

Հաշվարկային ժամանակահատվածի այն ամիսների փոխարեն, որոնց ընթացքում վարձու աշխատողը գտնվել է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում, հաշվի է առնվում մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդն սկսվելու ամսվան նախորդող՝ համապատասխան թվով հերթական օրացուցային ամիսների համար վճարված եկամուտը:

Ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու օրվա դրությամբ վարձու աշխատողի՝ տվյալ գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը տասներկու ամսից պակաս լինելու դեպքում, վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը հաշվարկելիս հաշվի է առնվում նաև հաշվարկային ժամանակահատվածում այլ գործատուի՝ մինչև տվյալ գործատուի մոտ աշխատանքի անցնելը վճարված եկամուտը՝ եթե վարձու աշխատողը ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու օրվա դրությամբ այդ գործատուի հետ աշխատանքային

հարաբերությունների մեջ չի գտնվում: Ընդ որում, հաշվարկային ժամանակահատվածի մեկ ամսվա համար կարող է հաշվառվել մեկ գործատուի կողմից վարձու աշխատողին վճարված եկամուտը:

Սույն մասի 4-րդ պարբերությամբ սահմանված՝ այլ գործատուի վճարած եկամտի մասին տեղեկատվությունը ներկայացնում է վարձու աշխատողը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով լիազոր մարմնի տված տեղեկանքի հիման վրա:

3. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի միջին ամսական եկամուտը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդող տարվա՝ օրենքով սահմանված սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող եկամուտը, բացառությամբ վարձակալության պայմանագրի հիման վրա ստացած եկամտի, տասներկուսի բաժանելու միջոցով:

4. Վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ վարձու աշխատողի նպաստի չափը հաշվարկելու համար միջին ամսական աշխատավարձը բաժանվում է 25-ի և բազմապատկվում է ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանի երկրորդ աշխատանքային օրվանից սկսած աշխատանքային օրերի թվով, իսկ հղիության ու ծննդաբերության նպաստի դեպքում՝ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի ժամանակաշրջանի բոլոր աշխատանքային օրերի թվով:

Հինգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ վարձու աշխատողի նպաստի չափը հաշվարկելու համար միջին ամսական աշխատավարձը բաժանվում է 21-ի և բազմապատկվում է ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանի երկրորդ աշխատանքային օրվանից սկսած աշխատանքային օրերի թվով, իսկ հղիության ու ծննդաբերության նպաստի դեպքում՝ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի ժամանակաշրջանի բոլոր աշխատանքային օրերի թվով:

5. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական եկամուտը բաժանվում է 30,4-ի (մեկ ամսվա միջին օրերի) վրա եւ բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության օրացուցային օրերի թվով:>>:

6. Նպաստը, սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափից՝ եթե.

1) սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձի չափը պակաս է ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափից,

2) ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձը պետական գրանցում է ստացել տվյալ տարվա ընթացքում կամ, ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդող տարվա ընթացքում եկամուտ չի ունեցել, սակայն կատարել է ամսական նվազագույն սոցիալական վճարներ,

3) վարձու աշխատողը չունի սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված եկամուտ:

Հոդված 3. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասում <<5>> թիվը փոխարինել <<3>> թվով, իսկ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

<<Հարկային մարմինը սույն մասով սահմանված տեղեկանքը տրամադրում է անձի՝ տեղեկանքի համար դիմելու օրվա դրությամբ հարկային և սոցիալական վճարների գծով ունեցած պարտավորությունները կատարելուց հետո:>>:

Հոդված 4. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասում <<սխալը հայտնաբերելուց հետո՝>> բառերը փոխարինել <<՝ սխալը հայտնաբերելուց հետո>> բառերով, իսկ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ մասով.

<<6. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի՝ սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկանքով ներկայացված եկամուտը ստուգման արդյունքում կամ ճշտված հաշվետվության հիման վրա փոփոխվելու դեպքում ավել վճարված նպաստի գումարի հետպահումը կատարում է հարկային մարմինը, իսկ պակաս վճարած նպաստի գումարը վճարում է լիազոր մարմինը:

Ավել վճարված նպաստի գումարի հետպահումը կատարվում է և պակաս վճարած նպաստի գումարը վճարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:>>:

Հոդված 5. Օրենքի 28-րդ հոդվածի.

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1. Հարկային մարմինը.

1) սոցիալական վճարների ճշտությանն ուղղված դեպքերում օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների ժամանակ հսկողություն է իրականացնում գործատուների կողմից վարձու աշխատողներին նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման ճշտության նկատմամբ,

2) սույն օրենքով սահմանված դեպքերում իրականացնում է ավել վճարված նպաստի գումարի հետպահումը՝ այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տեղեկատվություն տրամադրելով լիազոր մարմնին:>>,

2) 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1) սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկում, նշանակում եւ վճարում է ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց նպաստները, վարձու աշխատողին է տրամադրում սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ պարբերությամբ սահմանված տեղեկանքը.>>:

Հոդված 6. Օրենքի 28-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մասով.

<<3. Առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով լիազոր մարմնին է տրամադրում անձնավորված տեղեկատվություն հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրամադրված անաշխատունակության թերթիկների մասին:>>:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Օրենքով սահմանված կարգով հաշվարկված և նշանակված (վճարված) հղիության և ծննդաբերության նպաստները, մեկամսյա ժամկետում, գործատուները և լիազոր մարմինը հաշվարկում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հղիության և ծննդաբերության նպաստները հաշվարկելու համար սահմանված կարգով:

Եթե սույն հոդվածի 2-րդ մասի հիման վրա հաշվարկված հղիության և ծննդաբերության նպաստի չափը բարձր է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Օրենքի հիման վրա հաշվարկված և նշանակված (վճարված) հղիության և ծննդաբերության նպաստի չափից, ապա տարբերությունը վճարվում է մեկամսյա ժամկետում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Եթե սույն հոդվածի 2-րդ մասի հիման վրա հաշվարկված հղիության և ծննդաբերության նպաստի չափը ցածր է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Օրենքի հիման վրա հաշվարկված և

նշանակված (վճարված) հղիության և ծննդաբերության նպաստի չափից, ապա հաշվարկված և նշանակված (վճարված) հղիության և ծննդաբերության նպաստի վերահաշվարկ չի կատարվում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թ. մարտի 1-ին 1-ին ընթերցմամբ ընդունված՝ <<ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Հ/Հ	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	1.	Նախագիծը 1-ին հոդվածը <<բառերը>> բառից հետո լրացնել <<, իսկ Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը <<իրականացնող>> բառից հետո լրացնել <<այլ>> բառով>> բառերով:	Հստակեցվում է մինչեւ 3 տարեկան երեխայի կամ մինչեւ 18 տարեկան հաշմանդամ երեխայի հիվանդության դեպքում ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստի իրավունք ունեցող անձանց շրջանակը, եթե մայրը (խնամակալը, հոգաբարձուն) հիվանդության կամ ընտանիքի մյուս հիվանդ անդամի հետ գտնվում է հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում):
ՀՀ կառավարություն	2.	Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող՝ 22-րդ հոդվածի վերնագիրը <<ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ>> բառից հետո լրացնել <<(ԵԿԱՄՈՒՏԸ)>> բառով	Վերնագիրը համապատասխանեցվում է հոդվածի բովանդակությանը:
ՀՀ կառավարություն	3.	Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող՝ 22-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <<ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու օրվա դրությամբ վարձու աշխատողի՝ տվյալ գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը տասներկու ամսից պակաս լինելու դեպքում, վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը հաշվարկելիս հաշվի է առնվում նաև հաշվարկային ժամանակահատվածում այլ գործատուի՝ մինչև տվյալ գործատուի մոտ աշխատանքի անցնելը վճարված եկամուտը՝ եթե վարձու աշխատողը ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու օրվա դրությամբ այդ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ չի գտնվում: Ընդ որում, հաշվարկային ժամանակահատվածի մեկ ամսվա համար կարող է հաշվառվել մեկ գործատուի կողմից վարձու աշխատողին վճարված եկամուտը:>>:	Հստակեցվել է վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը հաշվարկելիս այլ գործատուի վճարած եկամուտը հաշվի առնելու պայմաններն ու կարգը:
ՀՀ կառավարություն	4.	Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող՝ 22-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ պարբերությունը <<նաև՝>> բառից հետո լրացնել <<սույն օրենքով սահմանված>> բառերով:	Հստակեցվում է միջին ամսական աշխատավարձը հաշվարկելու կարգը:
ՀՀ կառավարություն	5.	Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող՝ 22-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ պարբերությունում <<գործատուների կողմից վճարված>> բառերը փոխարինել <<գործատուի վճարած>> բառերով:	Հաշվի առնելով նախորդ առաջարկությունը՝ կատարվել է խմբագրական բնույթի փոփոխություն:
ՀՀ կառավարություն	6.	Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող՝ 22-րդ հոդվածի 3-րդ մասում <<12-ի վրա>> բառերը փոխարինել <<տասներկուսի>> բառով:	Կատարվել է խմբագրական բնույթի փոփոխություն:
ՀՀ կառավարություն	7.	Նախագծի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ. <<Եթե սույն հոդվածի 2-րդ մասի հիման վրա հաշվարկված հղիության և ծննդաբերության նպաստի չափը ցածր է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Օրենքի հիման վրա	Հստակեցվում է, որ եթե նախկինում նշանակված հղիության և ծննդաբերության նպաստի չափը ավելի բարձր է, ապա վերահաշվարկ չի կատարվում:

		հաշվարկված և նշանակված (վճարված) հղիության և ծննդաբերության նպաստի չափից, ապա հաշվարկված և նշանակված (վճարված) հղիության և ծննդաբերության նպաստի վերահաշվարկ չի կատարվում:>>:	
Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Գագիկ Մելիքյան /046 ընտրատարածք/ Սուքիաս Ավետիսյան /080 ընտրատարածք/ Էդուարդ Շարմազանով /079 ընտրատարածք/ Գագիկ Բաղդասարյան /120 ընտրատարածք/ Մխիթար Հարությունյան 025 ընտրատարածք/	8.	Առաջարկում ենք նախագծում 1-ին հոդվածից հետո ավելացնել հոդված հետևյալ խմբագրությամբ. <<Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում <<բոլոր աշխատանքային օրերի համար>> բառերը լրացնել <<յուրաքանչյուր ամսվա հաշվով>> բառերով:>>: Հարկ ենք համարում նախագծում ամրագրել, որ վարձու աշխատողին տրվող հղիության ու ծննդաբերության նպաստը հաշվարկվի ինչպես բոլոր աշխատանքային օրերի համար, այնպես էլ դրանից եկամտահարկը հաշվարկվի ամսական հաշվարկով՝ հարկվող եկամտի չափն ըստ ամիսների հաշվարկելու նպատակով: Առաջարկությունը նպատակ ունի ներդաշնակեցնել նախագծի սույն դրույթը <<Եկամտահարկի մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի հետ:	Խնդրո առարկան կարգավորված է <<Եկամտահարկի մասին>> ՀՀ օրենքով, համաձայն որի՝ եկամտահարկի հաշվարկը կատարվում է յուրաքանչյուր ամսվա եկամտի (հետևաբար՝ յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված նպաստի) հաշվով:
Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Գագիկ Մելիքյան /046 ընտրատարածք/ Սուգիաս Ավետիսյան /080 ընտրատարածք/ Էդուարդ Շարմազանով /079 ընտրատարածք/ Գագիկ Բաղդասարյան /120 ընտրատարածք/ Մխիթար Հարությունյան 025 ընտրատարածք/	9.	Առաջարկում ենք հանել նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը: Առաջարկում ենք վերացնել վարձու աշխատողներին վճարվող ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձի առավելագույն չեմը՝ ըստ այդմ վերանայելով վարձու աշխատողի նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը հաշվարկելու կարգը: Արդյունքում՝ վերջին 12 ամիսների ընթացքում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնված անձի կորցրած եկամուտը կփոխհատուցվի 100 տոկոսով:	Ընդունվել է: Հիմք ընդունելով ներկայացված առաջարկությունը՝ նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող՝ 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում <<Բացառությամբ վարձու աշխատողին տրվող հղիության և ծննդաբերության նպաստը հաշվարկելու դեպքի, եթե>> բառերը փոխարինվել են <<Եթե ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի՝>> բառերով:
Արծվիկ Մինասյան /114 ընտրատարածք/ Արտյուշա Շահբազյան /104 ընտրատարածք/ Արա Նռանյան /115 ընտրատարածք/ Լիլիթ Գալստյան /113 ընտրատարածք/	10.	Օրենքի նախագծով (2-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերություն) նախատեսված է հղիության և ծննդաբերության անաշխատունակության դեպքերից բացի, ժամանակավոր անաշխատունակության մյուս բոլոր դեպքերի նպաստների հանմար պահպանել փոխհատուցման վերին չեմը՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով: Նկատի ունենալով ՀՀ բոլոր քաղաքացիների սոցիալական իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախկինում գործող օրենքը ժամանակավոր անաշխատունակության դեպքերի փոխհատուցման համար կիրառում էր աշխատանքային ստաժի սկզբունքը, առաջարկում ենք ժամանակավոր անաշխատունակության այլ դեպքերի համար տրամադրվող նպաստների համար սահմանել ստաժ՝ մինչև 5 տարի աշխատանքային ստաժ ունեցող աշխատողներին	ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011թ. մարտի 1-ին 1-ին ընթերցմամբ ընդունված՝ <<Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածում կատարվել է փոփոխություն՝ համաձայն որի հանվել է նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող աշխատավարձի չեմը նաև վարձու աշխատողին վճարվող մյուս նպաստների հաշվարկման համար՝ անկախ աշխատանքային ստաժի տևողությունից: Առավելագույն չեմը պահպանվում է ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին տրվող նպաստների հաշվարկման համար:

		փոխհատուցելով նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, իսկ 5 տարուց ավել աշխատանքային ստաժ ունեցողներինը՝ միջին աշխատավարձի ողջ չափով:	
Արծվիկ Մինասյան /114 ընտրատարածք/ Արտյուշա Շահբազյան /104 ընտրատարածք/ Արա Նռանյան /115 ընտրատարածք/ Լիլիթ Գալստյան /113 ընտրատարածք/	11.	Օրենքի նախագծով (2-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերություն) նախատեսվում է, որ <<վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու ամսվան նախորդող տասներկու հերթական օրացուցային ամիսների համար տվյալ գործատուի կողմից վարձու աշխատողին վճարած եկամուտը տասներկուսի բաժանելու միջոցով>>: Այսպիսի խմբագրությամբ չի լուծվում ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու օրվա դրությամբ վարձու աշխատողի տվյալ գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը տասներկու ամսից պակաս լինելու դեպքերում առաջացող հարցերը, մասնավորապես, ինչպես է հաշվարկվելու նպաստի չափը, եթե 12 ամիս չի գոյանում, և անձը նախկինում էլ այլ տեղ չի աշխատել: Առաջարկում ենք միջին աշխատավարձը հաշվարկել համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված կարգով, հաշվի չառնելով ժամանակավոր անաշխատունակության մեջ և (կամ) արձակուրդում և (կամ) ոչ սեփական մեղքով պարապուրդում գտնված ամիսները՝ քանզի վերոհիշյալ պայմանները կամ առաջանում են աշխատողի կամքից զատ կամ էլ նրա՝ օրենքով սահմանված հանգստի մասն են կազմում:	Նախագծի համաձայն՝ վերացվում է վարձու աշխատողին տրվող նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձի առավելագույն շեմը, միջին ամսական աշխատավարձի (հետևաբար՝ նաև նպաստի) չափը փոխկապակցելով անաշխատունակությունը առաջանալուն նախորդող 12 ամիսներին վարձու աշխատողի աշխատելու ժամանակահատվածին (ստացած եկամուտներին), ինչը, մեր կարծիքով արդարացի է: Ըստ այդմ, միջին ամսական աշխատավարձը ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված կարգով հաշվարկելու դեպքում կխախտվի իրականացվող փոփոխությունների տրամաբանական ամբողջությունը, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ միջին աշխատավարձը կախված չէ աշխատելու տևողությունից: Հարկ է նաև նկատի ունենալ, որ նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող՝ 22-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է միջին աշխատավարձի հաշվարկման միասնական կարգ՝ անկախ անձի աշխատելու ժամանակահատվածից: Հետևաբար, եթե անձը տվյալ գործատուի մոտ աշխատել է, օրինակ, 3 ամիս և դրանից առաջ այլ գործատուի մոտ չի աշխատել, նրա միջին ամսական աշխատավարձը կհաշվարկվի այդ 3 ամիսների համար ստացած աշխատավարձը տասներկուսի բաժանելու միջոցով: Միաժամանակ, հնարավոր խնդիրներից խուսափելու համար առաջարկվում է. 1. նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող՝ 22-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով. <<3) վարձու աշխատողը չունի սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված եկամուտ:>>, 2. նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող նոր պարբերությունը խմբագրել (փոխատեղել <<հարկային և սոցիալական վճարների գծով>> և <<տեղեկանքի համար դիմելու օրվա դրությամբ>> արտահայտությունները):
Արծվիկ Մինասյան /114 ընտրատարածք/ Արտյուշա Շահբազյան /104 ընտրատարածք/ Արա Նռանյան /115 ընտրատարածք/ Լիլիթ Գալստյան /113 ընտրատարածք/	12.	Օրենքի նախագծով (2-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ պարբերություն) նախատեսվում է, որ <<այլ գործատուների կողմից վճարված եկամտի մասին տեղեկատվությունը ներկայացնում է վարձու աշխատողը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով լիազոր մարմնի տված տեղեկանքի հիման վրա>>: Օրենքի նախագծում, սակայն, նշված չէ, թե ում վրա է տրվում այդ դեպքում ապացուցման բեռը, եթե ժամանակավոր անաշխատունակության առաջացման պահին տվյալ գործատուի կազմակերպությունը կամ հիմնարկը լուծարվել է: Առաջարկում ենք նախորդ գործատուից տեղեկանք ներկայացնելու անհնարինության դեպքում (լուծարման,	Համաձայն նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող՝ 22-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերության՝ այլ գործատուի վճարած եկամտի մասին տեղեկատվությունը ներկայացնում է վարձու աշխատողը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով լիազոր մարմնի տված տեղեկանքի հիման վրա: Նախատեսվում է տեղեկանքը տրամադրել՝ հիմք ընդունելով անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայի տվյալները:

		ֆիզիկական անհնարինության և վարձու աշխատողի վերահսկողությունից դուրս գտնվող այլ դեպքերում) թույլատրել վարձու աշխատողին նախկին գործատուի վճարած եկամտի մասին տվյալները ստանալ պետական լիազոր մարմնից:	